ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
12 նոյեմբերի 2018 թվականի N 278--Ա

ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018թ. նոյեմբերի 1-ի N 01ԳԲ/21.2ՏՄ/6402-18 գրությունը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Ավետիք Ավետիսյանին 2018թ. նոյեմբերի 13-ից 17-ը ներառյալ գործուղել ք. Երևան՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և «Invest In Network» բրիտանական խորհրդատվական ընկերության կողմից կազմակերպվող «Էներգետիկայի Շաբաթ 2018» համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

3. Ա. Ավետիսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ.նոյեմբերի 12
ք. Կապան